

Յ Ա Ո Ա Ջ Ա Ք Ա Ն

Ազգային ընդհանուր եւ մասնագիտական պատմութիւնը խորազգրելու աշխատութեան մեջ, մեծ դեր ունին կատարելիք գաղութներու առանձին պատմութիւնները, որոնք թէ՛ շահեկան եւ թէ՛ կարեւոր մասը կազմած են եւ սակաւին պիտի կազմեն նոյն այդ ընդհանուր պատմութեան:

Որպէս առանձին եւ յատկանշական գաղութ, Հալեպի Հայոց հին պատմութիւնը գրի առնել շատ դժուարին բայց կարեւոր աշխատանք է: Մենք, սարիներէ ի վեր, օգտուելով մեր Առաջնորդական պատճենէն, ձեռնարկեցինք Հալեպի Հայոց Պատմութիւնը գրելու եւ կը յուսանք զայն հրատարակել ներկայ կամ յառաջիկայ տարուան ընթացքին, եթէ ունենանք յարմար պատճենութիւններ: Այդ պատմութեան համար, ուրիշ կարեւոր վաւերագրերու կարգին, աչի առջեւ ունեցանք նաեւ Սալիպէ քաղի հին գերեզմանասան եւ Ազիզիյէի Ազգ. գերեզմանասան հարիւրաւոր տապանաքարերը, որոնց արձանագիրը պատաստելու առթիւ, փափաքեցանք, ներկայ համեստ ուսումնասիրութեամբ եւ առանձին հաստատով յոյս ընծայել Հալեպի Ազգ. գերեզմանասանց պատմութիւնը, որ ահագին յոյս սփռեց Հալեպի Հայ գաղութին նախնական եւ մշակոյթային պատմութեան ուսումնասիրութեան վրայ, իբր հաստատուն եւ վաւերական աղբիւրներ:

Այս վաւերական աղբիւրներու կարգին, օգտակար նկատեցինք նոյնպէս առանձին հաստատով ի յոյս ընծայել Հալեպի Ս. Քառասնից Եկեղեցւոյ հայերէն ձեռագրայ ընդարձակ Յուցակը, որ ներկայ աշխատութեանս հետ գրեթէ միաժամանակ կերպով կը հրատարակուի Ս. Յակոբեանց տպարանէն: Մտադիր ենք նոյնպէս, առանձին հաստատով մը սակ հրատարակել Հալեպի Հայ Բազմաբնակից պատմութիւնը, որ շատ մեծ աղետ ունի 17րդ դարու սկիզբը Հալեպի մէջ ծաղկող հայ մշակոյթին հետ:

Վստահ ենք որ թէ՛ ներկայ հաստատ, եւ թէ՛ հետզհետէ հրատարակելիները, իրենց բոլոր թերիներով, պիտի արժանանան ընթերցողներու ներողամտութեան: